ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ ԵՆ «ԵՐԴԱՇՆԱԿ ԼԻՆԵՆՔ» ՀՈԴՎԱԾԻՆ

ԱՅՍՊԻՍԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ

Ընթերցելով Անահիտ Սեկոյանի «Հյուսիսային պողոտա» նոր վեպը և ապա «Երեկոյան Երևան» թերթի սեպտեմբերի 26-ի համարում տպագրված հարցազրույցը հեղինակի հետ, փորձում եմ արձագանքել խմբագրության հրավերին:

Արդեն որերորդ անգամ Անահիտ Սեկոյանը անդրադառնում է արդիականության հուզող հարցերին: Մեծ հաճույքով ընթերցեցի շնորհալի գրողի այս վեպը ևս: Այն շատ հետաքրքիր է երկու առումով. նախ, որ նրանում վարպետորեն պատկերված են մեր առօրյան, մեր կյանքը իր ռեալ գծերով, մարդկային փոխհարաբերություններում տեղի ունեցող նորի ծնունդը, և ապա՝ վեպի հիմքում դրված ճարտարապետական - քաղաքաշինական սուր պրոբլեմներից մեկի արծարծումը, որի նկատմամբ հնարավոր չէ անտարբեր մնալ:

Ավելորդ չէ ասել, որ վեպունի դաստիարակչական խոշոր արժեք: Երևանցին առիթ է ունենում ճանաչելու իր քաղաքը, իմանալու այն մարդկանց մասին, որոնք ապրում են իրենց քաղաքի բախտով, մասնակից դառնալով նրանց խոհերին, ուրեմն և թանկ գնահատելու նրանց աշխատանքը, սիրելու և պահպանելու իրենց հոյակերտ ոստանը:

Վեպի հիմնական թեման Երևանի, ճարտարապետական իմաստով, ամենակենսական խնդիրն է:

Այդ մեր մայրաքաղաքի Հյուսիսային պողոտայի տասնամյակներ ի վեր լուծման ըսպասող պրոբլեմն է: Այս այն բացառիկ դեպքերից է, երբ շինարարություն չի տարվում բարձր պահանջներ բավարարող նախագիծ չլինելու պատճառով: Չէ՞ որ Հյուսիսային պողոտան ստեղծվելու է քաղաքի կենտրոնում, նրա երկու կարևոր հանգույցների՝ Լենինի հրապարակի և օպերայի ու բալետի շինության շուրջը առկա կուլտուրայի հրապարակի միջև, որպես այդ երկուսի օրգանական կապ:

Վեպի հեղինակը իրավացիորեն իր առջև նպատակ չի դրել լուծելու տվյալ գեղագիտական և տեխնիկական համաձույլ պրոբլեմը, դա ճարտարապետների լուծելիք գործն է, սակայն նա գեղարվեստի լեզվով հասկացնում է լրջությունը, անօգուտ կոմպրոմիսներից զերծ մնալու, հանուն գործի հաջողության մասնագետի հայրենասիրական նվիրվածության անհրաժեշտությունը:

Անկասկած, դժվար խնդիրներից է այս պողոտայի այնպիսի կառուցապատման նախագծի ստեղծումը, որով առաջացած շինությունների համակարգը ներդաշնակեր ինչպես Լենինի հրապարակի, այնպես էլ օպերայի և նրա շուրջն արդեն առկա կառուցապատմանը: Օրինակ, նախագծային առաջարկներ էին լինում կառուցապատումն իրականացնել բազմահարկ շենքերով, մի այլ դեպքում՝ հինգ հարկանի շինություններով: Որոշ նախագծերով այդտեղ էին տեղադրվում թատրոնական շենքեր՝ իրենց բեմական աշտարակներով: Բոլորն էլ, եթե ունեին դրական կողմեր, ապա անպակաս էին նաև թերությունները, անհամապատասխանությունները, անմասշտաբայնությունը, անները դաշնակությունը:

Այս պայմաններում անհրաժեշտություն էր առաջանում խնդրի լուծումը տանել այլ ճանապարհով: Այդ ճանապարհը, մեր կարծիքով, այն է, որ նոր ստեղծվելիք կառուցապատումը հնարավորին չափ հեռացվի բուն պողոտայից, առավել չափով օպերայի հսկայաչափ և յուրօրինակ հորինվածքով շինությունից, թողնելով, որ այն դիտվի բոլոր կողմերից և շատ ավելի հեռվից, ընդհուպ՝ Լենինի հրապարակի մոտերքից: Այդ միտքն իր անդրադարձումն է գտել տարբերակներից մեկում: Այստեղ պողոտան վերածվում է մի կանաչապատ ընդարձակ տարածության: Եթե այն իր սկզբնամասում ունի մոտ 30 մետր լայնություն, ապա օպերային մոտենալով, հասնում է ավելի քան 100 մետրի, իսկ այս հեռավորության վրա կառուցված ոչ շատ բարձր շենքը չի էլ մտնի օպերայի հետ ներդաշնակության մեջ ու չի էլ հակադրվի նրան:

Խնդրի լուծման պրպտումներն այժմ մեզ բերում են նոր տարբերակի առաջարկման: Նկատի ունենալով այն իրողությունը, որ Հայֆիլհարմոնիայի մեծ համերգասրահի շուրջը երբեմնի լինելիք ընդհանրական պարտեզը քաղաքի երկու պողոտաներով մանրատվել, փոխարկվել է չորս փոքր պուրակների և նրա վերականգնումը հիշյալ մայրուղիները ստորգետնյա դարձնելու միջոցով, համենայնդեպս, մոտ ժամանակներում իրականացնելու ռեալություն չունի, առաջարկում եմ Հյուսիսային պողոտայի, Աբովյան, Տերյան և Թումանյան փողոցների միջև ընկած ողջ տարածությունը այլևս չկառուցապատել, այդտեղ ստեղծել կանաչի նոր մասիվ, մոտ 5—6 հեկտար տարածությամբ: Այդ տարածքում նոր կառուցումներ գրեթե չեն իրականացվել. եղած տներից կպահպանվեն արտասահմանյան երկրների հետ բարեկամության և կուլտուրական կապի ընկերության շենքի ճակատային մասը, ռուսական թատրոնի, սպորտկոմիտեի և «Հեքիաթ» սրճարանի շինությունները. մնացածը անարժեք խրճիթներ են և վաղուց ենթակա վերացման:

Մայրաքաղաքի անմիջական կենտրոնում այսպիսի ընդհանրական նոր կանաչ տարածության ստեղծումը ոչ միայն անգնահատելի օգուտ կբերի ռեգիոնի միկրոկլիմային և բնակչության հանգստին, այլև կհանդիսանա քաղաքի ամենամեծ հարստություններից մեկը: Աբովյան, Տերյան և Թումանյան փողոցների այդ հատվածները կընդգրկվեն կենտրոնի մեծ ներդաշնակության մեջ և իրենցով կհարստացնեն այն:

Սրանով մայրաքաղաքի կենտրոնի բարձիթողի այդ հատվածի բարեկարգումը կդառնա անմիջականորեն իրականացվելու ենթակա:

Տ. ՄԱՐՈՒԹՅԱՆ
Հայհիդրոնախագիծ ինստիտուտի գլխավոր ճարտարապետ, ՀՍՍՀ վաստակավոր ճարտարապետ





Գծ. 1-2 - Հյուսիսային պողոտայի փարբերակներ (հեղ.՝ Տ. Մարության)